ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-1

ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային հսկողության սարքավորումների տրամաչափարկման ու ստուգաչափման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային հսկողության սարքավորումների տրամաչափարկման ու ստուգաչափման ծառայությունների գնման գործընթացի նպատակով պատասխանատու ստորաբաժանման՝ որը համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 33-րդ կետի իրականացնում է գնահատող հանձնաժողովի լիազորությունները, նիստը տեղի ունեցավ 17.03.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Գ.Մովսիսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Գ.Մովսիսյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում եմ, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեմ շահերի բախում:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ.Ղազարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /15.03.2017թ. թիվ-1/18-2/8354-17 գրությամբ/ հրավեր էր ուղարկվել՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին (ք.Երևան, Կոմիտասի պող., 49/4 շենք)

-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգին 16.03.2017թ. դրությամբ հայտ է ներկայացրել «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն.

-մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	Ճառագայթային հսկողություն իրականացնող <<Yantar>> մակնիշի սարքավորումների տրամաչափարկման և ստուգաչափման ծառայություններ	22143	132858
2	Ճառագայթային հսկողություն իրականացնող <<Yantar>> մակնիշի սարքավորումների տրամաչափարկման և ստուգաչափման ծառայություններ	159525	957150
3	Ավտոմաբիլային՝ 100 տոննա կշռողականությամբ էլեկտրոնային կշեռքների ստուգաչափման ծառայություններ	63000	378000
4	Ավտոմաբիլային՝ 60 տոննա կշռողականությամբ էլեկտրոնային կշեռքների ստուգաչափման ծառայություններ	12600	75600

5	Ուղեբեռների էլեկտրոնային կշեռքների (1000 կգ) ստուգաչափման ծառայություններ	36000	216000

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:
Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում (գնահատման թերթիկը կցվում է) հանձնաժողովը որոշեց՝

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը գնահատել որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ.

-Ներկայացված հայտի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց՝

-«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից (առաջին տեղն զբաղեցրած մասնակից) և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու համար:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ **Գ.Մովսիսյան**

Քարտուղար՝ **Գ.Ղազարյան**